<< 26>> 08 2023թ. Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին
/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ __131____
# ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Մասիսի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Դավթյանս քննելով <<11>> 08 2023թ. Թիվ 131 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ Գեղարքունիքի մարզի Այգուտ բնակավայրի 1 փ. 86 տ. Գրիգորի Սամվելի Վարդանյանը /ծնվ.28.11.1963թ./ 11.08.2023թ-ին ժամը 10:50-ի սահմաններում գտնվել է Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակի հասարակական տրանսպորտի կանգառի ծածկի տակ՝ օգտագործելով ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Գրիգորի Սամվելի Վարդանյանին
/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ գումարով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____
/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը՝ << >> _____2023թ. _____

Ուստ.Մասիսի բաժնի պետ _____ Ա.Դ.Դավթյան